

Տ Ա Ճ Կ Ա Հ Ա Յ Ք

1000 Ոսկիի ԳՆԱՆՈՒՄԻՆ մը Ազգ. Հիւանդանոցին. Կեդր. Կրօն. Ժողովոյ ատենապետ Տ. Մեսրոպ Արքեպիսկ. Սուքիասեան, մէկ քանի օր առաջ Տ. Գէորգ Եպս. Երէցեանը իր մօտ կանչելով յայտնեց թէ իր մահէն յետոյ Ազգ. Հիւանդանոցին կը նուիրէր իր անձնականին համար յատկապէս պատրաստել տուած և 509 ոսկիէ աւելի արժէք ունեցող ձեռք մը պատարագի զգեստը, այսինքն չաթալ(թագ մը՝ ամբողջ ոսկեհոռ և մարգարտազարդ, եմիւրոն, վալիսս ու շուրջառ, որոնց ամէնն ալ թանկագին քարերով, մարգարիտներով, զրմբուխներով ու կիտուածանկարներով շինուած են: Նոյնպէս պղինձի վրայ փորագրուած թանկարժէք Տիւրամօր պատկեր մը, հին արուեստի հիանալի նմոյշ մը, որուն ասկէ առաջ Եւրոպացի հնագէտներ մինչև 4—500 ոսկի գին դրած ու գնել ուռուղած են, բայց Ն. Արքեպիսկոսիւն չէ ծախած: Նոյնպէս գեղակերտ արծաթէ կիտուածեայ լոսյ մը Կենաց Փայտով. Տ. Մեսրոպ Արքեպիսկոսի այս բոլոր նուէրները կը յանդին 1000 ոսկիէ աւելի գումարի մը: Տ. Գէորգ Արքեպիսկ. Տ. Մեսրոպ Արքեպիսկ. փառաւորին համաձայն պատրաստեց հարկ եղած զրբը: Նուիրատու Արքեպիսկ. զանազան թանկարժէք նուիրատուութիւններ ընելու մտադիր է նաև իր ծննդավայրին՝ Եփրատի եկեղեցիին և մայրաքաղաքին մէկ քանի եկեղեցիներուն, ինչպէս Սամաթիոյ Ս. Գէորգ, Ղալաթիոյ Ս. Լուսաւորիչ և այլ եկեղեցիներուն:

— 700 ոսկիի ԳՆԱՆՈՒՄԻՆ մը. Վսեմ. Մաթուս էֆ. Ունճեան, այս անգամ ևս փառաւորելով կարեւոր նուիրատուութիւնով մը օգտուել իւր ընտանիքներին՝ Գատըգիւղի Ս. Թագաւոր եկեղեցին, տեղւոյն Թագ. Խորհուրդին յայտնած է թէ կտակաւ նոյն եկեղեցիին կը թողու 700 ոսկի: Ըստ այսմ ամէն տարի Ս. Կարապետի տօնին օրը Ս. Թագաւոր եկեղեցիին մէջ Պատարագ պիտի մատուցուի քարոզիչին կողմէ և Հոգեհանգրստեան պաշտօն պիտի կատարուի ողբացեալ Աբիկ էֆ. Ունճեանի և համօրէն Ունճեան զերդաստանին ննջեցելոց հոգւոյն համար:

— Պատրիարքարանի որոշման համաձայն ասկէ վերջ մայրա-

քաղաքին այն ամէն եկեղեցիները, որոնք պէտք ունին քահանայի, իրենց ընտրելին գոնէ վեց ամիս առաջ պէտք է ներկայացնեն Կրօն. ժողովին որպէս զի եթէ քահանայացուն չէ պատրաստուած և չունի եկեղ. գիտելիքներու հմտութիւն Դպրեմանք կամ այլուր զրկուի և յետոյ ձեռնադրուի:

— Սամարիոյ աղքատախնամը Կաղանդի և Ծնունդի առթիւ 10,000 օխա ածուխ բաշխեց երեք թաղերու աղքատներուն, որուն 2000 օխան բարեսէր անձի մը կողմը նուիրուած էր:

Ազգ. Հիւանդանոցի մէկ կարևոր պէտքն ալ պիտի լրանայ, ինչպէս առջի օր Ս. Պատրիարք Հայրը յայտնեց իր Ս. Ծննդեան առթիւ խօսած ճառին մէջ. այսինքն թէ Ռէօնթիկնեան ճառագայթներու գործիք մը՝ որ կարժէ մօտաւորապէս 3-400 ոսկի, բարեսէր մը խոստացած է նուիրել նոյն հաստատութեան կը լսենք թէ՛ այդ բարեսէրն է Հոգաբարձութեան ժրաջան անդամներէն Յարութիւն Էֆ. Սալանեան: Ինչպէս յայտնի է, Մանգումէ ժամանակին շեշտեց պէտքը Ռէօնթիկնեան մեքենայի մը, և այժմ ուրախ ենք որ այս մասին գրածը լուադոյն արձագանգ մը գտած է:

Ա. Ծննդեան տօնին առթիւ ինչպէս սովորութիւն է կեդր. բանտի հայ բանտարկեալներուն տյոօր Պատրիարքարանէ դրամական նուէր զրկուեցաւ կեդր. բանտի հոգևոր հովիւ Տ. Եղիա քհն.-ի միջոցաւ:

Իզմիրի Հոգ. Որբախնամը անցեալ շաբթու նիստ գումարելով Առաջնորդ Սրբազանին նախագահութեան ներքեւ, որոշած է Որբանոցը վեց տարի ևս շարունակել, որպէս զի նոյն ժամանակամիջոցին մէջ որբուհիները հետեւելով Ս. Հռիփսիմեանց վարժարանի դասընթացներուն, նախնական բարձրագոյն դաստիարակութիւն մը ստանան և ի վիճակի ըլլան ապագային գիւրդութեամբ ունէ մասնաճիւղի հետեւելու: Արդէն իսկ Որբախնամը որոշած է շրջանաւարտ որբուհիներէն երկուքը յառաջիկայ տարի Պոլիս զրկել Բերայի Ս. Նրորդութիւն Հիւանդանոցի գասերուն հետեւելու և մասամբ մըն ալ լեցնելու այն պահասը՝ որ շատ զգալի է եղեր տեղւոյն Հայ համայնքին և իր Ս. Լուսաւորչեան Հիւանդանոցին համար: Որբանոցի ծախքերուն պիտի յատկացուի տարեկան 50 ոսկիին գումար մը, իր ունեցած պատրաստ դրամէն, իսկ բացը գոցելու համար՝ պիտի դիմէ բարեսէր ազգայիններու, որոնք արդէն միշտ օժանդակած են վերոյիշեալ հաստատութեան: Տիկին Ս. Պալեօզ որ

ներկայ գտնուած է այս նստին, խնդրած է Ս. Առաջնորդին որ երկսեռ որբանոցները միացնելու և անոնց գոյութեան միջոցները ապահովելու համար բարեհաճի իր ազդեցութիւնը ի դորժ դնել: Այս առթիւ ազնիւ Տիկինը խոստացած է ինչպէս միշտ ասկէջ վերջն ալ շարունակել իր նիւթական ու բարոյական ձեռնառութիւնը յիշեալ որբանոցներուն մասին:

—Տիկին Ս. Պալեօզ 20 հատ դորժ նուիրած է տեղւոյն Որբանոցին:

—Անցեալ շաբթու Իգմիւրի մէջ մեռած է Տիար Սարգիս Տէր Քասպարեան որ տեղւոյն եկեղեցիին կտակած էր 5 տուները, երեքը Իգմիւրի մէջ և երկուքը՝ Աղեքսանդրիա:

Մարտի Գաւառ. Ժողովը Նոյ. 12ին կըրակի օր նիստ գումարած է 17 անդամոց ներկայութեան, իսկ երեք անդամները կը բացակայէին քաղաքէն ու մէկն ալ մեռած էր: Երկար խորհրդակցութիւններէ վերջ Ժողովը նկատելով որ Կաթող. փոխանորդ Տ. Փառէն վրդ. ընտրելիութենէն կը հրաժարի, միւս երկու ընտրելիներէն Տ. Կորիւն վրդ. Եսայեանի և Տ. Եղնիկ Պապայանի մասին քուէարկութիւն կատարած և Մարաշի վիճակին առաջնորդ ընտրած է Տ. Կորիւն վրդ-ը: Սոյ Սրբազան Կաթողիկոսը բոտ ամենայնի համաձայն գտնելով օրինաց, ընտրութիւնը հաստատած է և զայն ծանուցած է Մարաշի Գաւառ. Վարչութեան: Նոյնը հաղորդած է նաև Պատրիարքարանի:

Ե Գ Ի Պ Տ Ա Հ Ա Յ Ք

Հայկական Բ. Ը. Միութիւն. Եգիպտոսեան հայ պարոն մը, (Ա.), իր խոստման համեմատ, զոր ասկէ առաջ ծանուցած էինք, Հայկական Բ. Ը. Միութեան խրկած է 300 եգ. ոսկի իբր մուտքի նուէր, և 32 եգ. ոսկի իբրև առաջին տարուան բաժանորդագրութիւնը:

—Միութեան համար գնուած է 22,000 մարկի դերմանական փոխառութեան արժէթուղթ, 3 առ 100:

Կ Ա թ Ո Ւ Կ Հ Ա Յ Ք

—Վերջերս Պօլիս գացող Մաճառ պատուիրակութեան յը անդամը Տ. Ֆրանքոյ եպիսկոպոս՝ ընկերակցութեամբ Յովհ. Ծ. Վ. Թումայեանի՝ այցելութիւն տուած է Կաթողիկ հայոց Պատրիարք Սապպաղեան Սրբազանին: Այս տեսակցութեան միջոցին Պատրիարքը փափաք յայտնած է որ Հունգարիա գտնուող

40 հազարի մօտ Հայ-Հռոմէականներուն համար իրենց մայրենի լեզուն և եկեղեցական ինքնուրոյն ծէսերուն ծանօթ Հայ-Կաթոլիկ եկեղեցականներ պաշտօնի կոչուին: Տ. Ֆրանքոյ եպիսկոպոս հաւատարմ է, թէ Մաճառ կառավարութիւնը արդէն շատ թոյլատու ընթացք մը կը բռնէ այդ կարգի խնդիրներու մասին, և խոստացած է իր վերադարձին անոր բաղձանքները կատարել: Հունգարիոյ Հայ-Կաթոլիկներու հովիւ նշանակուած է Թորպաճեան վարդապետ:

— Անտիոքի շրջականները Ղընիէ անուն գիւղին մէջ 30 տարէ առաջ Լատին կրօնաւորներ մուտ գտնելով կը յաջողին գիւղին 126 տուն հայերը լատինացնել, շինք տուն սակայն հաւատարիմ կը մնան իրենց եկեղեցիին տարիներէ ի վեր յամառօրէն կը պաշտպանեն իրենցն սեփականութիւնը Լատիններու կողմէ անիրաւարար գրաւումի փորձերու դէմ: Վերջերս Հալէպի մէջ այդ սեփականութեան դատը տեսնուելով ի նպաստ հայերուն վճիռ տրուած է:

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԵՐԳ ՓԱՐԻԶՈՒՄ

Ս. Էջմիածնի միաբան հ. Կոմիտաս վարդապետը Փարիզի «Salle. des Agriculteurs»-ում և «l'Ecol d'Art»-ում տուել է Հայկական համերգ, մի քանի սիրողների մասնակցութեամբ: Գաղղիական՝ յատկապէս մասնագիտական երաժշտական երկշաբաթերթերը «Le Courrier Musical» № 24, «Le Mercure Musical» № 23—24, «Le Monde Musical» № 23 և «L' Auror» օրաթերթը իրենց դեկ. 21-ի համարում հիացմամբ են խօսում այն համերգների մասին: Խօսք չեն գտնում գովելու Հայոց պատարագի արարողութեան եղանակների քաղցրութիւնը, վեհութիւնը և ներդաշնակութիւնը: Մենք թարգմանաբար դնում ենք ներքեւում թերթերից այն հատուածները, որ յիշեալ համերգներին են վերաբերում: Բացի Կոմիտաս վարդապետից մասնակցութիւն են ունեցել օրիորդ Շուշիկ և Մարգարիտ Բաբայեանները և պ. պ. Մուղունեան, Շահ-